Ա. ԻՆՃԻԿՅԱՆ

ԻՍԱՀԱԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

(Մահվան 50-ամյակի առթիվ)

Յուրաքանչյուր ժողովրդի գրականության պատմության անցման շրջափուլերում հանդես են գալիս գրողներ, որոնք, ժամանակի առաջատար դեմքերը չլինելով հանդերձ, արտահայտում են կրական պրոցեսի հետագա զարգացման տենդենցները՝ տվյալ շրջափուլը շաղկապելով հաջորդի հետ։

1908—1918 թվականները կազմում են հայ գրականության, մասնավորապես պոեզիայի պատմության ամենահետաքրքրական և բովանդակալից ժամանակաշրջաններից մեկը։ Այդ տասնամյակի պոեզիան իր վրա կրում է Տերյանի տիրապետող ազդեցության դրոշմը։ Տասնամյակի վերջում Չարենցն իր ռադիո-պոեմներով ազդարարում է մի նոր շրջափուլի սկիզբը, և նույնպես իր տիրապետող ազդեցության դրոշմն է դնում հետագա տասնամյակների հայ պոեզիայի վրա։

Հայ պոեզիայի զարգացումը Վահան Տերյանից մինչև Եղիշե Չարենց, թեև կարճատև, բայց միաժամանակ բարդ և հետաքրքրական պրոցես է։ Տերյանը առաջ բերեց բանաստեղծների մի ամբողջ լեգեոն, որի գերիշխող մասը էպիգոններից էր կազմված։ Քչերն էին, որ 10-ական թվականների սկզբներին, հասարակական-քաղաքական կյանքի վերելքի շրջանում, դուրս գալով տերյանական դպրոցից, սկսեցին հնչեցնել նոր, առույգ երգեր՝ նախապատրաստելով Չարենցի մուտքը։

* * *

Դրանցից ամենաուշագրավը Իսահակ Իսահակյանն էր՝ ստեղծագործական շեշտված անհատականությամբ, զորեղ և ամբողջական նկարագրով մի ճշմարիտ բանաստեղծ, որը դեռափթիթ իր տաղանդը և կյանքը նվիրաբերեց հայրենիքին։

Իսահակ Իսահակյանը ծնվել է 1893 թ. հուլիսին, Ալեքսանդրապոլից (Լենինական) 24 կիլոմետր հեռավորության վրա, Ախուրյանի ափին գտնվող Ղազարապատ գյուղում, ուր անցել էին նրա մեծանուն հորեղբոր՝ Ավետիք Իսահակյանի մանկության և պատանեկության տարիները։

Իս. Իսահակյանի ծնողները իրենց որդուն յոթ-ութ տարեկան հասակում տալիս են Ալեքսանդրապոլի առևտրական դպրոցը։ Սրամիտ և ուշիմ մանուկը ուսման մեջ մեծ առաջադիմություն է ցուցաբերում, սակայն, նրա վրա ճնշող տպավորություն են գործում դպրոցում տիրապետող չինովնիկական դաժան «կարգ ու կանոնը»։ Իսահակին խորթ էր նաև դպրոցի առևտրական ուղղությունը. շոր թվերն ու հաշիվները բնավ չէին ներդաշնակում ի ծնե բանաստեղծական-ռոմանտիկական նրա բնավորությանը, նրա հակումներին։ Չնայած դասավանդությունը տարվում էր ռուսերենով, տանը նա խանդավառությամբ սովորում էր մայրենի լեզուն, բանաստեղծ հորեղբոր՝ Ավ. Իսահակյանի խոր-

Բոհոկ Բաղհակյան

հուրգներով ու ղեկավարությամբ կարդում էր հայերեն գրքեր։ Մայրենի լեզուն շուտով ի հայտ է բերում նրա գրական ձիրքը։ Իսահակը տասներկու տարեկան հասակից սկսում է գրել բանաստեղծություններ։

Գրական հակումներ ունեցող մի քանի պատանիներ՝ Արտաշես Տեր-Մարտիրոսյանը, Գևորգ Աֆրիկյանը, Աղասի Վարդանյանը, որոնց հետ էր նաև Իսահակ Իսահակյանը, 1907 թ. Ալեքսանդրապոլում կազմակերպում են «Ալագյազի տղերք» գրական խմբակը։

Խմբակի հավաքույթներում «Ալագյազի տղերքը» ընթերցում են իրենց գրվածքները, քննության են առնում գրականության տեսության հարցերը, որոնց շուրջը, հաճախ, բռնկվում են բուռն, կրքոտ վիճաբանություններ։ Այդպիսի մի վիճաբանություն, մի անգամ, ծագում է Լերմոնտովի մասին։ Աղմկալի բանավեճի ընթացքում, մեջգիշերին, երբ Իսահակը սիրած բանաստեղծի երկերի հատորը ձեռքին, իր տեսակետն էր պաշտպանում, լամպը շուռ է գալիս և գրասեր պատանիները մնում են մթության մեջ։ Չկամենալով վիճաբանությունը ոնդհատել, Իսահակը առաջարկում է փողոցը լուսավորող լապտերներից մեկը տեղափոխել սենյակ։ Իսահակը կանգնում է բարձրահասակ ընկերներից մեկի ուսերին և երկաթյա ալունից կախված լապտերը իջեցնում։ Այնուհետև վերսկսվում է Լերմոնտովի երկերի ընթերցումն ու վեճը, որ տևում է մինչև լույս։

«Ալագյազի տղերքը» հրատարակում են գրական ալմանախներ, Ալեքսանդրապոլի և Թիֆլիսի հայ մամուլի էջերում տպագրում են իրենց ստեղծագործությունները, ավելի ուշ՝ հանդես են գալիս նաև առանձին գրքույկներով։

Գրական-ստեղծագործական փորձերին զուգընթաց, Իսահակ Իսահակյանը մեծ եռանդով շարունակում է ինքնազարգացումը. կարդում և ուսումնասիրում է համաշխարհային գրականության և փիլիսոփայական մտքի մեծ ներկայացուցիչների երկերը։ Հայ գեղարվեստական գրականության կլասիկները նրան հնարավորություն են ընձեռում կատարելապես տիրապետելու հիասքանչ մայրենի լեզուն, թափանցելու նրա նրբին գաղտնիքների մեջ։ Հետզհետե ձևավորվում է նրա աշխարհայացքը։ Հասարակական կյանքի երևույթների, իրականության նկատմամբ նրա մեջ մշակվում է ակտիվ քննադատական վերաբերմունք, որ արտահայտվում է այդ շրջանի նրա բանաստեղծություններում և ամբողջ վարքագծում։ Իր ըմբոստ ելույթների համար 1909 թ. Իսահակը դպրոցից վտարվում է. միայն շնորհիվ Ավ. Իսահակյանի և ուսուցիչ Կոստանդին Աբովյանի (Խաչ. Աբովյանի թոռան) միջնորդության, նրան հաջողվում է վերընդունվել։

1912 թ. Իս. Իսահակյանն ավարտում է առևտրական ուսումնարանը։ Նույն թվականին հրատարակվում է նրա «Հեքիաթ արևի տակ» արձակ պոեմը, որը երիտասարդ բանաստեղծի վրա է հրավիրում գրական հասարակայնության և քննադատության ուշադրությունը։

Դպրոցում և աղատ ընթերցանությամբ ձեռք բերած գիտելիքներով չէր կարող գոհանալ գիտության գաղտնիքների հրապույրը ճաշակած տաղանդավոր երիտասարդի որոնող միտքը։ Նա ձգտում է բարձրագույն կրթության, սակայն, տնտեսական սուղ պայմանները ստիպում են հրաժարվել այդ մտքից և մեկնել գյուղ ուսուցչության։ Մեկ տարի նա պաշտոնավարում է Լափանի շրջանի Հանդ գյուղում։

1913 թ. Իսահակը զորակոչի է ենթարկվում և ուղարկվում Թիֆլիսի յունկերական դպրոցը։ Մարդկային արժանապատվությունը յուրաքանչյուր քայլափոխին վիրավորող, բանականությունը բանտող ցարական բանակը խորթ միջավայր էր ազատախոհ և նրբազգաց երիտասարդի համար։ «Հազա՜ր երանի չոբան եզիդիներին Ալագյազի լանջերում,— սրտի խորին մորմոքով գրում է Իսահակը այդ շրջանի իր նամակներից մեկում։— Ցնցոտիներով աղքատ լինեի, անտուն, անձրևի տակ, բուք-բորանի բերան, միայն թե՝ աղա՜տ, ազա՜տ»։

Բանակում ևս նա շարունակում է փայփայել բարձրագույն կրթություն ստանալու միտքը։ Նա ծրագրում է յունկերական դպրոցն ավարտելուց հետո ընդմիշտ հրաժեշտ տալ զինվորական ասպարեզին և «ամեն միջոց ընձեռել համալսարան մտնելու»։

1913 թ. Ավ. Իսահակյանին ուղղած նամակներից մեկում նա գրում է. «...Մեծ սխալ էր իմ այստեղ ընկնելս, ուր ողջ կյանքս փշրվեց, խեղաթյուրվեց։ Ինչ եկել եմ՝ ոչ մի տող չեմ կարդացել ու գրել. ժամանակ չկա։ Զինվորական դիսցիպլինան ու ցերեմոնալը չի հանդուրժում ոչինչ մտավոր ու ինքնուրույն»։

Զինվորական համազգեստը, այնուամենայնիվ, անկարող է լինում կաշկանդելու ի ծնե բանաստեղծի ստեղծագործական ավյունը։ Իս. Իսահակյանը բանակում գրում է իր լավագույն երկերից մեկը՝ «Ալագյազի տղերքը» վեպի մի հատվածը, որ 1914 թ տպագրվում է Ալեքսանդրապոլի «Արև» թերթում։

1914 թ. համաշխարհային պատերազմի նախօրյակին, սպայի (պոդպորուչիկ) կոչումով Իս. Իսահակյանն ավարտում է զինվորական դպրոցը։ Սակայն նույն թվականի նոյեմբերին, երբ պատերազմի մեջ է մտնում Թուրքիան և կրկին արթնանում է թուրքական բռնակալության կոշմարային լծից Արևմտյան Հայաստանը ազատագրելու հույսը, վերջինիս իրականացման հրապուրիչ հեռանկարով խանդավառված, քաջարի, հայրենասեր երիտասարդը քանիցս դիմում է հրամանատարությանը՝ խնդրելով իրեն ուղարկել ռազմաճակատ։ Իս. Իսահակյանի դիմումը ի վերջո հարգվում է, և նրան, իր ցանկության համաձայն, ուղարկում են Կովկասյան ռազմաճակատ։

Մարտական գործողությունների ընթացքում բնականից նրբակազմ և նրբազգաց երիտասարդը հայտնաբերում է իսկական մարտիկի ամրապինդ ոգի, անվեհերություն ու անձնվիրություն, որոնցով և ոգևորում, ոգեշնչում է իր հրամանատարության տակ կռվող վաշտի մարտիկներին։

Այն գումարտակը, որի կազմի մեջ էր մտնում Իս. Իսահակյանի վաշտը, 1915 թ. գարնանը, Ղարաբայիթի բարձունքի վրա կռվի է բռնվում թուրքական գերակշռող ուժերի դեմ։

Այդ ճակատամարտում ցույց տված սխրագործությունների համար Իս. Իսահակյանին կոչում են «Ղարաբայիթի արծիվ»։

Վերջին ճակատամարտը տեղի է ունենում 1916 թ. հունվարի 31-ին, Էրզրումի մատույցներում, որտեղ և բանաստեղծ-մարտիկը հերոսական մահով ընկնում է քսաներեք տարին դեռ չբոլորած։ Ռուսական բանակի Գերագույն հրամանատարությունը մինչ այդ Իս. Իսահակյանին պարգևատրել էր «Ս. Գեորգի զենքի» շքանշանով։ Հրամանում ասված է՝ «15-րդ Կովկասյան հրաձգային գնդի պոդպորուչիկ, թշնամու դեմ մղվող մարտում սպանված Իս. Իսահակյանին շնորհել «Ս. Գեորգի զենքի» շքանշան, այն բանի համար, որ նա 7-րդ վաշտի գլուխն անցած, 1915 թ. դեկտեմբերի 30-ին, Ղզլար-Ղալա գյուղի մոտ, «օղակավոր խրամատներով» ամրացված բարձունքը գրոհելիս,

միշտ վաշտի առջևից գնալով և անձնական օրինակով ոգեշնչելով մարտիկնե-
րին, ճակատից և թևից թշնամու ուժեղ կրակի տակ, դժվար անցանելի լեռնային
վայրում, խոր ձյունի միջով վաշտը արագ սվինամարտի տարավ, թուրքերին
խրամատներից դուրս շպրտեց ու փախուստի մատնեց, գրավեց սարալանջի
մի շարք խրամատներ, և այդպիսով մեծապես հեշտացրեց հարևան գրոհող
զորամասերի առաջադրանքի կատարումը»։

Իս. Իսահակյանի հերոսական մահն ազդարարող գրության հետ գրեթե
միաժամանակ հարազատներին է հանձնվում նրա վերջին նամակը, գրված
1916 թ. հունվարի 30-ին, ճակատագրական գրոհից մի քանի ժամ առաջ։ Նա-
մակն ուղղված էր նրա 15-ամյա եղբորը՝ Աբասին։

Բազմատանջ հայրենիքի ազատագրության համար մահվան ընդառաջ
գնացող անվեհեր հերոսի պատգամն է դա՝ խորապես հուզիչ, վսեմորեն մարդ-
կային մի վավերագիր։

Օրհասական մարտի թոհ ու բոհի մեջ, կյանքին հրաժեշտ տալու վերջին
պահին մարտիկ-բանաստեղծը փայփայում է բարոյապես գեղեցիկ ու վեհ,
առողջ ու ամբողջական մարդու իդեալը, և իր պատանի եղբոր միջոցով, ու ի
դեմս նրա՝ մատաղահաս սերնդին է պատգամում մարդկային բարձր առաքի-
նությունները. սովորել և ապրել մարդկանց համար, օգտակար լինել նրանց՝
ահա մարտիկ-բանաստեղծի պատգամների իմաստը։ «...Լա՛վ սովորիր ո՛չ
թե թվանշանի, այլ նրա՛ համար, որ սովորածովդ օգտակար լինես ուրիշնե-
րին... Մեծամիտ մի՛ լինիր և ամեն մի նվաստ մարդու քեզ պես հաշվիր ու,
աշխատիր օգտակար լինել նրան։ Ազնվությունը շատ մեծ առաքինություն է՝
ազնի՛վ եղիր... Խիզա՛խ եղիր, շիտա՛կ ու հաստա՛տ... Մի՛ աշխատիր լավ
երևալ, քան թե կաս... Ի ցույց ոչինչ մի՛ անի... Եթե մի բան դուր չի գալիս, ու
սիրտդ լսում, տեսնում է սուտն ու չարությունը՝ մի՛ հարմարվիր ու մի՛ զիջիր...
Երբեք մի՛ հուսահատվիր. համբերո՛ղ եղիր ու տոկո՛ւն։ Մահից մի՛ վախենա,
բայց կյանքը սիրիր խելացի, արդար ու գեղեցիկ սիրով...»։

Իս. Իսահակյանի մեջ շատ ուժեղ էր կյանքի սերը, որ նա անվարան զոհա-
բերեց առավել մեծ ու վսեմ զգացմունքի՝ հայրենիքի սիրուն։ Նա ջերմ հայ-
րենասեր էր. «Հպա՛րտ եղիր, որ հայ ես։ Սիրի՛ր հայրենիքդ ու անցյալդ»,—
պատգամում է նա։ Սակայն իսկական հայրենասերի համար,—ինչպիսին Իս.
Իսահակյանն էր,— նույնիսկ պատերազմի դաշտում, կրքերի մոլուցքի և հրա-
գենների ահեղադղորդ որոտների մեջ հայրենասիրությունը ո՛չ միայն ազգա-
տեցության չէր վերածվում, այլ միանում, ներդաշնակում էր բարձր հումանիզ-
մին, յուրաքանչյուր ժողովրդի ազգային արժանապատվությունն ու իրավուն-
քը հարգելու գաղափարին. «Ամեն մի ազգ մեծ է և գեղեցիկ,— գրում է նա։—
Մի ամբողջ ժողովուրդ չի կարող կամ բոլորովին լավ, կամ վատ լինել»։ Նա
այն համոզմունքն էր դավանում, որ միայն արդար գործի համար կարելի է
զենքի դիմել. «Հարգիր և սիրիր ուրիշի կյանքը։ Բայց, երբ խիզճդ պահանջի,
մի՛ վախենա ո՛չ սեփական և ո՛չ ուրիշի արյուն թափելուց»։

Այսպես կարող էր գրել հարազատ զավակը մի ժողովրդի, որ իր բազմա-
դարյան պատմության մեջ երբեք անարդարացի, նվաճողական պատերազմներ
չի մղել և զենք է բարձրացրել միայն պաշտպանելու իր հայրենիքի ազատու-
թյունը, իր կուլտուրան, արևի տակ ապրելու իր սրբազան իրավունքը։

Բանաստեղծ-մարտիկի այս վսեմ պատգամները նրա ջինջ ու խոր հոգու
վերջին փայլատակումներն են, հայրենիքի զոհասեղանին բարձրացող հերոսի

ժպիտի լուսաշող ցոլքերը... Մահվան դեմ այդպես կարող են ժպտալ միայն հերոսները. «Հերոսը վսեմ արարած է,— գրել է Ավ. Իսահակյանը,—նա մարտընչում է ժպտալով, և նույնիսկ անկման ժամին էլ պահպանում է այդ ժպիտը...»։

* * *

Իսահակի վաղաժամ մահը խորապես ցնցում է Ավետիք Իսահակյանին, որ այդ ժամանակ գտնվում էր Ժնևում։ 1916 թ. ապրիլի 6-ի՝ հարազատներին ուղղած նամակում, իր սրտի մորմոքն արտահայտելով տաղանդավոր եղբորորդու մահվան առթիվ, նա գրում է. «Մեր ցեղի անգին ծաղիկը, մեր տան աստղը այլևս չկա... Միակ մխիթարությունս այն է, որ հերոսի պես ընկավ մեծ գաղափարի համար։ Սուրբ նահատակ, անմահ դարձավ։ Հայ ազգը հավիտյան կհիշե իր ազնիվ, իր սիրուն զավակին, որ իր տաղանդը և դալար կյանքը զոհ բերեց...»։

Նույն այդ ժամանակ է նա գրում «Եղբորս որդու՝ Իսահակ Իսահակյանի հիշատակին» սրտամորմոք բանաստեղծությունը.

...Սո՜ւտ է, հոգի՛ս, թե հիմի
Մարմարե ձյունն է ծածկում
Հողաթումբը քո շիրմի.
Դու իմ մոտս ես, իմ գրկում։

Ճակտիդ վրա, աստղի պես,
Պստիկ, պստիկ մի վերք կա.
Թո՛ղ համբուրեմ՝ լավանա,
Դու, իմ կորի՛ճ երեխա...

Հետագայում էլ, մինչև իր մահը, տարբեր առիթներով, իր նամակներում և օրագրերում, վարպետը հիշել է Իսահակին, ողբացել նրա անվերադարձ կորուստը, որ համարում էր իր սրտի միշտ այրող ու անբույժ վերքերից մեկը։

Այդ խոր վշտի հիմքը սոսկ արյունակցական կապը չէր. Իսահակյանը սգում էր ո՛չ միայն իր եղբորորդու վաղաժամ մահը, այլև կորուստը բնությունից շռայլորեն օժտված, տաղանդաշատ երիտասարդ բանաստեղծի, որի հետ, ինչպես ժամանակի գրական հասարակայնությունը, այնպես էլ ինքը, մեծ հույսեր էր կապել։ Իսահակի ակնհայտ գրական ձիրքը, որոնող ու վերլուծող միտքը մեծ բանաստեղծը նկատել է դեռ նրա պատանեկության շրջանից և ուշադիր հետևել նրա մտավոր զարգացմանը, խորհուրդներ տվել, նրա տրամադրության տակ դնելով Ղազարապատի իր ճոխ գրադարանը, գրքեր է հանձնարարել. կարդացել է նրա բանաստեղծությունները՝ իր հավանությունը տվել կամ դիտողություններ արել։ Գնահատելով Իսահակի սուր միտքը, նուրբ ճաշակը, վարպետն իր հերթին նրան հաղորդակից է դարձրել իր ստեղծագործական մտահղացումներին, ընթերցելու տվել նոր գրած երկերը՝ «Ուստա Կարոն», «Մասսա Մանուկը և Դև Սուլթանը» և մյուսները, լսել նրա խելացի դատողություններն ու դիտողությունները։

Ավ. Իսահակյանը երկար ժամանակ փայփայել է վաղամեռիկ բանաստեղծի երկերը մի ժողովածուի մեջ ամփոփելու և հրատարակելու իղձը։ Վերը հիշված նամակում հարազատներին նա պատվիրում է. «Նրա (Իսահակի—Ա. Ի.) բոլոր տետրակները, նամակները, թղթերը լավ պահեցեք, որ գամ և հրատարակեմ»։

Վարպետը երկար տարիներ իր արխիվում խնամքով պահել է Իսահակի բոլոր ձեռագրերը, ինչպես և մամուլում տպագրված բանաստեղծություններն ու արձակ էջերը. ապագա ժողովածուի համար մեքենագրել է տվել «Հեքիաթ արևի տակ» պոեմը և նույնիսկ պատրաստել Իսահակի գիմանկարի կլիշեն. սակայն, իր շատ մտահղացումների և բաղձանքների հետ, այդ մեկն էլ մնաց անկատար։

Իս. Իսահակյանի երկերի ժողովածուի հրատարակությունը մեծ վարպետի նվիրական իղձերից մեկի կատարումն է և մի անթառամ պսակ՝ հայրենիքին իր կյանքը նվիրաբերած վաղամեռիկ բանաստեղծի պայծառ հիշատակին։

* * *

Իս. Իսահակյանի գրական առաջին փորձերը վերաբերում են 1905—1907 թվականներին։ Պատանի բանաստեղծը դեռևս անվարժ իր տողերով արձագանքում է բողոքի և ըմբոստացման այն տրամադրություններին, որոնցով տոգորված էին նաև Շիրակի աշխատավորական զանգվածները ռուսական առաջին հեղափոխության օրերին։

Պատանի բանաստեղծը ազդարարում է «սև ստրկության օրհասի բոպեն», «ճգնաժամը բռնակալության», երբ «պիտի պայթի կայծակների պես՝ ճնշված մարդկության ահեղ ցասումը» («Հասել է ժամը...»)։ Մի այլ բանաստեղծության մեջ («Էլի՞ հին երգեր...»), մերժելով «արցունքոտ, թախծոտ», «մարած ու խամրած» հին երգերը, նա հնչեցնում է «նոր հոգու երգը»՝ «անահ, աննահանջ» պայքարի կոչելով «զրկանքի մարդկանց».

Դե՛հ, առա՛ջ, շեկ-շանթ երկաթե կամքով,
Զրկանքի՛ մարդիկ, վրեժի՛ որդիք,
Օ՜ն անդր, առա՛ջ անվեհեր հոգով,
Գոռ պայքարի մեջ է մեր հաղթանակ։

Իս. Իսահակյանի այդ շրջանի բանաստեղծությունները հատկանշվում են առույգ, մարտական տրամադրությամբ. նրա բնանկարների մեջ իշխող է «մրրկածուփ ծովը». նա պատկերում է ո՛չ թե խաղաղ ու անդորր բնությունը, այլ փոթորիկը, ամպրոպը. դա բանաստեղծական անդրադարձումն է հեղափոխական իրադարձությունների, շիկացած հասարակական մթնոլորտի և իրեն պոետի. փոթորկոտ հոգեվիճակի.

Օ՜, որքան մոտ են սրտիս լարերին
Երկինքն մոխրագույն, մռայլ, ամպամած,
Մրրկածուփ ծովն՝ ահեղ, մթագին,
Գոռ փոթորիկը՝ ամեհի, անսանձ...

Օ՜, որքան մոտ են սրտիս լարերին
Խրոխտ բողոքը աշխատավորի,
Արդար պահանջը, քանց որոտ ուժգին,
Ջլուտ բռունցքը՝ վե՛հ, սպառնալի՛։

Բանաստեղծի պատկերացումների մեջ ամպրոպը սիմվոլացնում է «արյուն-աշխարհը» շանթահարող ըմբոստ զանգվածների ահարկու ուժը։ Իս. Իսահակյանի բանաստեղծությունների այս շարքի մեջ որոշակի է Մ. Գորկու հեղափոխական ռոմանտիզմի, և մասնավորապես «Մրրկահավի երգի» ուրույն արձագանքը.

Ճայթի՛ր, փոթորի՛կ,
Թո՛ղ կայծակը հուր իր թափով ուժգին,
Հրաշունչ շանթի,
Ցրի՛ կնճիռներն, պարզի երկնքի
Ճակատն անմեկին...

Այս և նման բանաստեղծությունները հայ գրականության մեջ ռուսական առաջին հեղափոխության արտացոլման նոր, գրական լայն հասարակայնությանը դեռևս անծանոթ, վավերագրերից են։

Հեղափոխության պարտությունից հետո Իս. Իսահակյանի երգերում մարտաշունչ պաթոսը սկսում է հետզհետե տեղի տալ թախիծի և վշտի տրամադրություններին։ «Զրկանքի մարդկանց» մարտի կոչող, նրանց ցասումն ու փոթորկի վեհությունը երգող պատանի բանաստեղծը ձգտում է վերանալ «անտենչ», «աներազ», «ճահճացած կյանքից»։ Նա գրում է.

Անհուն վեհության բարձունքն եմ տենչում,
Սև կյանքից վերև, աշխարհից վերև.
Հոգիս արծվի պես դեպ վեր է ձգտում՝
Գահույքն աստղերի, գեղափայլ արև...

«Անհուն վեհության բարձունքը», դեպի ուր ձգտում է բանաստեղծի հոգին, ոչ այլ ինչ է, եթե ոչ նրա հասարակական իդեալի սիմվոլիկ պատկերը։ Ռեակցիայի շրջանում նրան թվում է, թե մարում է «ինչ լավ էր, լուսեղ՝ ճրշմարտի տենչանք, կռվելու կորով...»։ Իս. Իսահակյանի այդ տարիների երգերում գերակշռում են մռայլ գույները. ավելի հաճախ հանդիպող բնանկարը՝ միգապատ, անձրևող-լացող աշունն է. օրվա պահերից սիրելի են՝ մայրամուտը, իրիկունը, գիշերը։ Երբեմնի՝ փոթորկի, ամպրոպի վեհությունը երգող բանաստեղծը այժմ ողբում է «անհորիզոն ծովը» ծածկող թանձր ու ծանր մեգում մոլորված ճայի անել վիճակը.

Ծովը ծածկեց մեգը մռայլ,
Անհորիզոն ծովը չար.
Մլար մեգում՝ մենակ ու մառ
Մոլորվել է մի խեղճ ճայ...
Ծովը անծայր, հեռածավալ,
Մեգը թանձր, ծանր, չար.
Է՛հ, ի՞նչ, ո՞ւմ ի՞նչ, թո՛ղ լա, ճչա՛
Ի՞նչ է՝ մի խե՛ղճ, անճա՛ր ճայ...

Աշխարհը, կյանքը բանաստեղծը որակում է «անհեթեթ», «չար», «ցուրտ», «տխուր», «մռայլ», «կույր» մակդիրներով։ Դաժան իրականությունը բնորոշող այդ որակումներն ու գույները նա երբեմն կոնկրետացնում, առարկայացնում է։ Ահա Շիրակի դաշտի ձմեռային բնանկարը.

Ամայի դաշտում, մթնում անթափանց
Գյուղն է կծկվել ձյան ոավանի տակ.
Պառավների պես կնճռոտ, կռացած,
Դողում են խարխուլ խրճիթները ցած...
Սով-սառնամանիք պարում են անդուլ
Կտուրների տակ. հոնդյունով խենթ
Դևերն են ծեծում դռները խարխուլ,
Ցարքերն են նստել կրծքերին ամուր,
Եվ կրակ չկա խրճիթներում խուլ...

Սակայն սա սոսկ բնանկար չէ, այլև այդ ժամանակաշրջանի գյուղի սոցիալական-իրավական վիճակի, համատարած թշվառության բանաստեղծական ընդհանրացումը։

Ուշագրավ է, որ Իս. Իսահակյանը նույնիսկ ռեակցիայի տարիներին ամբողջովին կուլ չի գնում անհույս հոռետեսությանը. նա իսպառ չի կորցնում «լուսեղեն ափերի» հեռանկարը. իր տրտմաթախիծ երգերում նա երբեմն փայփայում է «մի այլ աշխարհի» երազանքը, «ինքնամոռաց, ջերմ սիրով» «ողջ աշխարհը արևելու» տենչը («Հեռուներո՜ւմ, հեռուներո՜ւմ լայն ու խոր...»)։

Ինչպես սերը դեպի մարդ-արարածն առհասարակ, այնպես էլ սերը դեպի կինը Իս. Իսահակյանի պոեզիայում արտահայտված է ամենանրբին, ամենապայծառ գույներով ու երանգներով. սիրո ուժը, հմայքն ու գեղեցկությունը նա տեսնում է ամենուրեք.

...Ամպերի մեջ, դաշտերի մեջ,
Ջրերի մեջ, իմ հոգու մեջ
Զգում եմ քեզ՝ կախարդ ու հեզ...

Իս. Իսահակյանի համար սերն ու ցանկասիրությունը իրար բացառում են. նա, դեկադենտների նման, չի երգում զգայական սիրո հաճույքները, այլ պանծացնում է սիրո վեհացնող, ազնվացնող ուժը. իր ցնորքների, «լույս-երազի» մեջ նա ստեղծել է սիրո իդեալը. նա որոնում է մի սիրտ՝ «վճիտ, ինչպես այգի ցող», «վեհ, անապակ, գորովալից ու սիրող»։

Սիրած էակին դիմելիս, նա ընտրում է ամենանուրբ, նվիրական բառերը.

Դու իրիկունն ես՝ խաղաղ ու բարի,
Գթոտ քրոջ պես՝ անչար, մտերիմ,
Ա՜խ, դու սփոփանք, իմ չքնաղ փերի,
Արի՛, գուրգուրի՛ր ալեկոծ սիրտն իմ...

«Մի այլ», ներդաշնակ ու գեղեցիկ աշխարհի իդեալն էլ բանաստեղծը կապում է սիրո հետ։

Այս ամենը վկայում են Իս. Իսահակյանի պոեզիայի բարոյագիտական, գեղագիտական առաջավոր, բարձր սկզբունքների, հետևապես և նրա գաղափարական նշանակության մասին։

Իս. Իսահակյանի առանձին բանաստեղծությունների, արտահայտությունների ու պատկերների մեջ ուշադիր ընթերցողն անշուշտ կնկատի Ավ. Իսահակյանի կամ Վ. Տերյանի ազդեցության դրոշմը։ Պատանի բանաստեղծի համար այդ ազդեցությունն անխուսափելի է (նկատենք, որ Իս. Իսահակյանն իր չափածո երկերի գերակշռող մասը գրել է 13—16 տարեկան հասակում)։ Հովհ. Թումանյանն ազդեցությունը համարում է «էն սանդուղքը, որով սկսնակը բարձրանում է դեպի ինքնուրույնություն»։ Իս. Իսահակյանը անհրաժեշտ տուրքը տալով իր նախասիրած բանաստեղծներին, շուտով դուրս է գալիս նրանց ազդեցության ոլորտից՝ դեպի ստեղծագործական ինքնուրույն ճանապարհ։ Ժամանակի քննադատությունը, ազդեցության փաստը նշելով հանդերձ, նրան համարել է «մի ինքնուրույն դեմք մեր գրականության մեջ»։

Իս. Իսահակյանի պոեզիան գրավում է զգացմունքների դրսևորման պատանեկան անմիջականությամբ, անկեղծությամբ, մտքի համարձակ թռիչքներով, գույների, պատկերների թարմությամբ, նրբերանգներով, բնության խոր ընկա-

յումով։ Բնության անձնավորման, շնչավորման գեղեցիկ օրինակներով հարուստ է նրա պոեզիան.

Գիշերն աստղերն է մեղմիկ օրորում,
Ծաղկունքի աչերը փակում երազով...

կամ

Վերջալույսն է թախծոտ ժպտով դալկանում,
Հեռ իրիկվա դդվող ստվեր ու շշուկ...

Բնության անձնավորման և բնանկարի միջոցով, զարմանալի նրբությամբ Իս. Իսահակյանը կարողանում է արտահայտել մարդկային հոգին ու հոգեբանությունը։ Առաջին սիրո կարոտն ու տվայտանքն ապրող պատանու հոգեվիճակն է դրսևորել բանաստեղծն իր լիրիկական բնանկարում.

Ծաղկունքի բույրով, հովի համբույրով
Գիշերն է սանրում ծով ծամերն անափ.
Վառին աստղերը մեղմանուշ դորով,
Քաղցր կարոտի անորոշ տագնապ...
— Իմ անհայտ կարոտ,
— Իմ ցնորք ցավոտ...

Բնության բանաստեղծական անձնավորման մի գեղեցիկ նմուշ է նաև հետևյալ բանաստեղծությունը, ավելի ճիշտ՝ լիրիկական փոքրիկ պոեմը, որից բերված հատվածն իսկ վկայում է Իս. Իսահակյանի տաղանդի պոտենցիալ ուժի, ստեղծագործական վառ, հարուստ երևակայության մասին.

Սպասումից հոգիս խռով, աչքս ճամփին ծովացած,
Հարցնում եմ ծաղիկներին, թիթեռներին, զեփյուռին.
— Արդյոք կգա՞ իմ նազելիս, արդյոք արևս մո՞տ է.—
Ու ամենքը միաբան՝ «Ո՞ւշ է, չի՛ դա, հեռո՛ւ է»...
— Նախանձում եք, չարախոսներ. ես զգում եմ՝ նա մոտ է.
Ապա ինչո՞ւ, դալուկ—ծաղկունք, այդպես շիկնել. վառվել եք...

* * *

Իս. Իսահակյանի ստեղծագործական զարգացման տենդենցները, նրա պաթոսը ցայտուն կերպով արտահայտված են «Հեքիաթ արևի տակ» և «Ալագյազի տղերքը» արձակ երկերում։ Սրանք գրված են բանաստեղծի գրական կյանքի վերջին շրջանում՝ 1912—1913 թվականներին։

«Հեքիաթ արևի տակ» արձակ պոեմով Իս. Իսահակյանը նշանավորում էր իր ստեղծագործական կյանքի մի նոր շրջանը. դա նրա գրական հասունության փայլուն վկայականն էր։ Այն ջերմ ընդունելությունն ու բարձր գնահատականը, որին արժանացավ այդ երկը, միաժամանակ վկայում էր նրա հասարակական-պատմական նշանակության մասին։

Ռուսական առաջին հեղափոխության պարտությունից հետո, ռեակցիայի տարիներին, գրական երիտասարդության մի մասը, տարվելով ժամանակակից արվեստի մեջ «մոդայական» դարձած դեկադենտական ուղղություններով, գրականությունը ողողել էր մեկուսացումը, նիրվանան, սեռական-զգայական հաճույքները փառաբանող, պասսիվության և պեսիմիզմի տրամադրություններով հագեցած երգերով։

Տասական թվականների սկզբներին, հատկապես Լենայի նշանավոր դեպքերից հետո, ինչպես ողջ Ռուսաստանում, այնպես էլ Կովկասում հասարակական կյանքը թևակոխում է վերելքի փուլ։ Գրականությունը շրջադարձ է ապրում, որի ամենարնորոշ անդրադարձումներից մեկը հայ իրականության մեջ Իս. Իսահակյանի «Հեքիաթ արևի տակ» արձակ պոեմն է։

Երիտասարդ բանաստեղծի երկը հանդես է դալիս ճիշտ ժամանակին։ Հասարակությունը հոգնել էր արդեն դեկադենտական նվացող, վհատեցուցիչ գրականությունից. նա ծարավի էր թարմ, առույգ, ոգեշունչ երգերի։ Այդպիսին էր հենց «Հեքիաթ արևի տակ»-ը։

Չնայած խորագրին, Իս. Իսահակյանի երկը էապես առնչություն չունի հեքիաթի ժանրի հետ։ «Հեքիաթի» հերոսն էլ՝ Արևազունը «թագավոր» է անվանված պայմանականորեն. ըստ էության, նա անձնավորում է ջահելությունը, երիտասարդությունը. «Աշխարհը սեր է արևի տակ, սերը՝ հեքիաթ, կյանքը հեքիաթ է՝ հեքիաթի մեջ, ջահելությունը՝ թագավոր»,— գրում է բանաստեղծը։ Եվ նկատենք, որ ժողովուրդն էլ «թագվոր» է կոչում նորափեսային։

Իս. Իսահակյանի «Հեքիաթ»-ը սիրո, երիտասարդության, կյանքի ներբողն է։ Այն ծայրեիծայր շնչում է առողջ լավատեսությամբ, վսեմ կենսասիրությամբ։ Պոեմը գրված է ստեղծագործական ճշմարիտ ներշնչումով, պաթոսով. զգացմունքները հորդում են՝ ինչպես պատվարը խորտակած գարնանային ջրերը։

Ռեակցիային հաջորդող ազատագրական շարժման վերելքի նոր շրջանի համար շատ բնորոշ են բանաստեղծի հետևյալ տողերը. «Վարարել են ջրերը հորդ, հոխորդ, ուռճացած են ամպերը նյութերով և հյութերով հզոր, և հողը շնչում է շտապ»։

Պոեմի հերոսն արտահայտում է պատմության ասպարեզն իջնող նոր սերնդի անպարտելի ուժը, անխորտակելի հավատը, սխրագործությունների պատրաստակամությունը. «...Ես հրաբուխ եմ, հրդեհ, հայացքներս՝ հրաբաձակ... Ջա՜ն, ինչքա՜ն մեծ սիրտ է, որ խնդում է, խնդում աշխարհով մեկ... է՜յ, հե՜յ, ահա ես կանգնել եմ աշխարհի վրա, աշխարհի մեջտեղը՝ հաստատ ու հզոր...»։

Մեծ իրադարձությունների նախօրյակն ապրող հասարակության տրամադրությունները բանաստեղծը դրսևորում է հեղափոխության գույնի՝ կարմրի տարբեր կիրառումներով ու կրկնություններով. «Ահա օրերը կանաչ ու կարմիր, կարմիր ու կանաչ շառայլող... Առավոտից շարժում ու շփոթ, աղմուկ, աղաղակ, շաչ ու շառաչ...

Ջա՜ն, արյունն է կարմիր,
կրակն է կարմիր,
արևն է կարմիր...։

Աշխարհը վառվում է իմ շուրջս, շառաչող, շարժուն, շնփորում է, զանգակվում զվարթ ու զիլ...»։

Գալիքի հանդեպ անհողդողդ հավատով լցված բանաստեղծը բացականչում է. «...Ինչ որ գա՝ թող գա »։

Ի հակակշիռ դեկադենտների մարդատեցության և պեսիմիզմի, Իս. Իսահակյանի երկը պատգամում է անհուն սեր ու զորով աշխարհի ու մարդկանց հանդեպ. «Ջա՜ն, նետես սիրտդ աշխարհքով մեկ, հորիզոններից հորիզոն, ձգվես, տարածվես, խոսես սրտանց ամեն մի շնչի, ինչի հետ, զգաս, հասկանաս, գգվես, գուրգուրես ամենին, և արևի տակ, արևի պես սիրո շռայլ շառայ-

լումով առատ, ջերմ փայլես, փայփայես աշխարհը հանուր, և արևի պես վառվես, ապրես աշխարհի մեջ, աշխարհի համար...»։

Այս պայծառ հայացքը կյանքի նկատմամբ հատկանշական էր ռեակցիայի տարիների մղձավանջը հաղթահարած և ազատագրական շարժման համընթաց քայլող այն երիտասարդության, որին պատկանում էր նաև «Հեքիաթ»-ի տաղանդավոր հեղինակը։

Իս. Իսահակյանը հատկապես այս երկով կանգնում է հայ պոեզիայի պատմական զարգացման այն ուղու վրա, որ միացնում է Վ. Տերյանի «Վերադարձը» Ե. Չարենցի «Ռադիո-պոեմների» հետ։

Միջանկյալ նկատենք, որ ժամանակի քննադատությունը Իս. Իսահակյանի արձակ պոեմի միակ թերությունը համարել է նրա խրթնաբանությունը։ Եվ իրոք. բանաստեղծն այստեղ անհարկի գործածել է շրջանառությունից վաղուց դուրս եկած և մոռացված գրաբարյան բառեր և նույնիսկ դրանցից մի քանիսի հիմքի վրա կազմել է նոր բառաձևեր։ Ըստ երևույթին, նա այդպես է վարվել, ձգտելով ստեղծել իր երկի ռոմանտիկական-պաթետիկ բնույթին համապատասխան «վսեմ ոճ», սակայն դրանով նա զգալիորեն խրթնացրել է իր լեզուն։

Իս. Իսահակյանի կենդանության օրով տպագրված նրա վերջին նշանակալից երկը՝ «Ալագյազի տղերքը» ծրագրված, բայց, ցավոք, անավարտ մնացած վեպի մի գլուխն է, ավելի ճիշտ՝ նախերգանքը։

Դա ոգեշունչ մի երգ է, մի արձակ բանաստեղծություն՝ դարերի արհավիրքների ու աղետների մեջ իր ազգային ինքնությունը պահպանած, աշխատասեր ու ստեղծագործ, և միշտ կենսունակ ժողովրդի մասին։

«Ալագյազի պես մեծ է իմ ժողովրդի հոգին, և Շիրակի դաշտերի պես լայնասիրտ է նա, և Ալագյազի պես տոկուն, և Շիրակի դաշտերի պես համբերող... Բյուր կայծակներ են բեկվել Ալագյազի լանջերին և բյուր բանակներ են հալվել Շիրակի դաշտերում...

Մեծ է իմ ժողովուրդը և արևի պես անմահ, և ահա տեսնում եմ ես՝ բարձրանում է նա, դարերի արևաբեր, արյունաքամ ճամփորդը՝ վսեմ, պարթև ու փառահեղ...»։

Հայ ժողովրդի հանդեպ գործադրվող անլուր հալածանքների և կոտորածների ամենամռայլ ժամանակաշրջանում, հայրենասիրական լալկան երգերի մեջ, երիտասարդ բանաստեղծի ձայնը հնչում էր խրոխտ ու առնական։ Նա արժանի հետևորդն էր իր գրական ուսուցիչների՝ Թումանյանի և Իսահակյանի, որոնք պայծառ հայացքով ու անսասան հավատով էին նայում հայ ժողովրդի ապագային։

Իս. Իսահակյանի ստեղծագործության պաթոսը հրաշալի բնութագրել է Վարպետը իր հետևյալ ոգեշունչ տողերով.

«...Դու բարձրանում էիր հայրենի հողում, ինչպես մի բարդի՝ կանաչ ու հզոր, և վեհ ճակատդ շառաչուն հողմերի մեջ, արյունդ խոխոջում էր, և հոգիդ՝ արծիվ սրամուխ՝ ամպրոպի մեջ շանթավառ»։

Իս. Իսահակյանն իր համեստ, բայց ուրույն տեղն ունի քսաներորդ դարի տասական թվականների հայ պոեզիայի պատմության մեջ։ Նա լավագույն ներկայացուցիչներից մեկն էր դրական այն երիտասարդության, որ իր կենսախինդ ու կենսահաստատ երգերով ծառացավ անկումայնության դեմ և ազդարարեց նոր ժամանակաշրջանի սկիզբը հայ գրականության մեջ։ Իր ստեղծագործական երախայրիքով գրական այդ սերնդի հետ է կապված Եղիշե Չարենցը՝ հայ ժողովրդի հեղափոխական պատմաշրջանի դրականության ամենամեծ դեմքը։